ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ք. Երևան, Նալբանդյան 128

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ՝

Գրադարան

ՊԱՇՏՈՆԸ՝

Գրադարանավար

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

- գրադարանի վարիչի հանձնարարությամբ իրականացնել գրադարանի համապատասխան ենթաբաժնի աշխատանքները,
- տիրապետել իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերին,
- կատարել գրքեր և այլ հրատարակություններ ձեռք բերելուն, հաշվառելուն, հանձնելուն և վերադարձնելուն առնչվող գրադարանային գրառումներ,
- իրականացնել համալսարանի գրքային ֆոնդի համալրման, մշակման և աուդիտի աշխատանքներ, դասիչավորել, ձևավորել, տեղաբաշխել և հաշվառել գրադարանային ֆոնդը,
- մասնակցել ֆոնդերի պահպանման, դրանցից օգտվելու կարգերի ու կանոնների ստեղծման աշխատանքներին,
- իրականացնել գրականության, պարբերականների և տարբեր նյութերի սպասարկում,
- կազմել և գրադարանի վարիչին ներկայացնել աշխատանքային փաստաթղթեր՝ հաշվետվություններ, առաջարկություններ,
- իրականացնել համալսարանի կանոնադրությամբ, գրադարանի կանոնադրությամբ, ռեկտորի հրամաններով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

- բարձրագույն մասնագիտական կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն և առնվազն մեկ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
- օրենսդրության և իրավական ակտերի՝ իր լիազորությունների իրականացման հետ կապված անհրաժեշտ գիտելիքներ,
- հայերենի և անգլերենի գերազանց իմացություն, ռուսերենի լավ իմացություն
- համակարգչային ծրագրերի՝ Microsoft Office-ի (Word/Excel) գերազանց իմացություն
- թիմում աշխատելու հմտություն և կազմակերպվածություն,
- տրամաբանելու, որոշումներ կայացնելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲ՝ **06** սեպտեմբերի 2021թ.

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ **20** սեպտեմբերի 2021թ.

CV-ն կարող եք ուղարկել ՀՊՏՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի hr@asue.am էլ-փոստին՝ վերնագրի դաշտում նշելով հաստիքը, որի համար դիմում եք: Փաստաթղթերն ընդունվում են բացառապես էլեկտրոնային եղանակով:

Հարցազրույցի կհրավիրվեն CV-ի ուսումնասիրության արդյունքում ընտրված թեկնածուները:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է բուհի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղմամբ. https://asue.am/ :